

**ՍՈՒՅԱՀՆԻ Ա.ՄԵՇՍ.ՓԻԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒԹՅՈՒՆ ԱՅԼԻՆԱԿԱՐԻ
ԻՐԱԿՈՆՈՑՄԱՆ ԺԱՄԱԿ**

Ճարտարապետության դրկառը ՏԵՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

I X — X դդ. Հայ ճարտարապետությունն իր հիմքում ուներ VII դարում ստեղծված նորաձևություններ, որոնցից էր Սովոր Գրիգոր Լուսավորիչ՝ Զվարթնոց տաճարի առաջին աստիճանի արտաքին խմբակալատի սերքին հարթությունը ձևավորող կեկորասիվ սյունակամարաշարը (սյուներն ունեին 20 մմ տրամագիծ և 6—7 մ բարձրություն), նորաստեղծ այդ մոտիվը մինչև VII դարը աննախաղեց էր և կիրավել էր առաջին անգամ։ Խոյն մոտիվը նույն ձևով առկա է Իանակ Մահարում՝ իրականացված, ըստ երեսութիւն, Զվարթնոցի նմանողությամբ։

Զվարթնոցի կառուցումից 300 տարի անց տվյալ մոտիվը, որոշակի վերամշակմասք, կիրառում է գոնում Սանահինի վանքի Ամենափրկիչ եկեղեցում, նրա արտաքին ճակատների ձևավորման մեջ։ X դարի երկրորդ կեսի ընթացքում նույն մոտիվով ձևավորվեցին Անիի հանրահայտ տաճարների արտաքին ճակատները։ Այգինույն հայ ճարտարապետությունը հայտնվում է զարգացման նոր փուլում, վերջնականապես ձևավորվում է հայ ճարտարապետության նոր ոճը որպես այդպիսին։ XI և հաջորդ դարերի ընթացքում Հայաստանում և Հարեւան Վրաստանում հայկական հիշյալ նորընծառ ոճով կառուցվում են քրիստոնեական բազմաթիվ տաճարներ։

XII—XIII դդ. ընթացքում հայկական ճարտարապետության այդ ոճը խաչկիրների շանքերով և նրանց հետ նվազա գաղթած հայ վարպետների և ճարտարապետների անմիջական գործակցությամբ հայտնվում է Արևմտյան Եվրոպայում։ Հունական և Հոռմեական ճարտարապետության տիրապետության ոլորտում և աննախընթաց զարգացում է ապրում։ Կրելով գորական և ումանական անունները, Այդ անվանումներով ոճերը բնորոշելու համար, բացի բարակ և բարձր սյուների, ուրիշ շատ կողմեր, ձեռք, տարրեր կան, բայց հիմնականը, որ սկզբից մինչև վերջ իր առկայությունը ունեցավ բոլոր նորակառուցներում, մեզ մոտ գենես Խ դարի կեսերին ծնունդ առած սյացիկ սյուներն են ու իրար կապող կամարները՝ իրենց յուրահատուկ կողմերով։ Իհարկե, արդարացի կլիներ, որ մեր թվարկության երկրորդ հազարամյակի նախորդ շրջանում հայ ճարտարապետության օրգանիզմում ստեղծված այդ ոճը անվանվեր հայ-գոթական։ Հայ-ոռմանական։ Մենք իրավասու ենք այդ հարցը բարձրացնելու նաև մեր օրերում։

Նկատի ունենալով Սանահինի վանքի Ամենափրկիչ եկեղեցում գործադրություն ստացած նորաձև սյունակամարաշարի մեծ նշանակությունը ոչ միայն ազգային մշակույթի շրջանակներում, այլև համբնդանուր ճարտարապետության անդաստանում, անհրաժեշտություն է առաջանում ամենայն ուշադրությամբ և բազմակողմանիորեն դիտարկել այդ հարցը ինչպես սկզբնական, այնպես էլ զարգացման տարբեր շրջաններում։

Հայ ճարտարապետության պատմության և տեսության քաջահմուտ հետազոտող, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, Պուսաստանի Ճարտարապետության ակադեմիայի ակադեմիկոս Հովհաննես Խալիքախյանը տե-

18. Հ. Մարության. Գոթական, թե՛ հայ-գոթական ճարտարապետական ոճ. — «Գաղուն», 1997, № 7, էջ 54—56.

վական անբասիր աշխատանքի և մեծ ջանքերի գնով ստեղծել է «Սանահին մենագրությունը, տպագրված ոռուսիրեն և իտալիրեն (Միլան, 1970)։ Մենագրությունների մեջ տեղադրված են հեղինակի բարձր աշակով ստեղծած վերակազմություններն ու բազմաթիվ որակյալ լուսանկարներ։

Հ. Խալիֆախչյանը մենագրության մեջ գրում է. «Գավիթի կառուցումից անմիջապես հետո, Հ դարի 80-ական թթ., Ամենափրկիլ եկեղեցու ճակատները զարդարվեցին կամարաշարով։ Քանի որ արևմտյան ճակատը ծածկված էր գավիթով, կամարաշարով գեղեցկացրին հյուսիսային ճակատի լավ երևացող ձախ մասը, արևելյան և հարավային ճակատները՝ ենթադրաբար մինչեւ կեսը։ Կամարաշարի ուշ ստեղծվելը հաստատվում է ոչ միայն նրա բացակայության շինության արևմտյան կեսում։ Ի տարրելություն շինության արևմտյան կեսի ճակատների, ինչպես և կամարաշարից վերև գտնվող պատի շարքերի կանոնավորության, կամարաշարի ներսում քարերը տարրեր մեծության են, որի պատճառով շարքերի բարձրությունը հորիզոնական ուղղությամբ հավասարեցված չէ։ Բացի այդ, կիսասյուները պատի հարթությունից դուրս են գալիս ավելի մեծ շափով, քան որմնախմարիսի վերին (երրորդ) աստիճանը, այդ պատճառով նրանց խարիսխները տեղակայված են երկրորդ աստիճանի վրա։ Վերջապես, կամարաշարը ցուց չի տրված եկեղեցու մանրակերտի վրա, որը գտնվում է եկեղեցու արևելյան ճակատի խմբանդակում։ Քանդակողը չէր կարող շանդրադարձնել այնպիսի յուրահատուկ մանրամաս, ինչպիսին ճակատի կամարաշարն է, քանի որ եկեղեցիների մեզ հասած մանրակերտերում (ինչպիսի են Սանահինի Աստվածածնինը, Հաղպատի Ս. Նշանինը, Աղքամարի Խաչի եկեղեցունը, Անիի Ս. Գրիգորինը) եթե քանդակործները շինության ճիշտ համաշափությունները չէին էլ պահպանում, ապա անպայման անդրադարձնում էին նրանց ընդհանուր պատկերը և կարերը առանձնահատկությունները²։

Մանոթանալով «Սանահին» մենագրության «Ամենափրկիլ» հատվածի ինչպես տեքստային մասին, այնպես էլ լուսանկարներին, նկատում ենք, որ աշխատության հեղինակը տաճարի արևելյան կեսում պահպանված դեկորատիվ սյունակամարաշարի իրականացման ժամանակի հարցում վրիպել է։ Հավաստի տվյալների հիման վրա նա տաճարի կառուցման ավարտը որոշում է 966 թ.։ Մինչդեռ, ինչպես տեսանք, գեկորատիվ սյունակամարաշարի ստեղծությամբ հասցնում է նույն գարի 80-ական թթ.։ Զվանալով, Հ. Խալիֆախչյանը շարադրում է իր եզրակացության հիմքերը, որոնք, սակայն, ամենայն բժանդրությամբ շեն մանրամասնվել։

Հայտնի է այն ավանդույթը, որ մեր շինարարները պառավել ուշադրություն են նվիրում տաճարների արևելյան մասին, այսինքն՝ գլխավոր խորանին, որտեղ պաշտամունքի առարկաներն են կենտրոնացված։ Հենց սկզբից աշխատում են շինությունը այնպիսի տեղում կանգնեցնել, որ նրա արևելյան ճակատը հեռվից երևա, արևելքը բաց լինի, արևելյան խորանը աշխատում են զարդարել որքան ներսից, նույնքան էլ դրսից։ Օրինակ, տաճարների մեծ մասում շինության ճակատը շքեղացնող, առավել արտահայտիլ դարձնող եռանկյունի կամ սեղանաձև հիմքով խորշեր են արվում արևելյան ճակատներում, գլխավոր սեղանը լուսավորող պատուհանը արևելյան ճակատի վրա՝ մյուս ճակատների պատուհանների համեմատությամբ ավելի մեծ շափերի են անում, ավելի ճոխ քանդակներով շրջանակում և այլն։ Հետեւում է, որ Ամենափրկիլ արևելյան մասը ճարտարապետորեն հարստացնելը կապված է եկեղեցաշինության մինչև հիմա գործող տրամաբանված ավանդույթի հետ։ Ամբողջ շենքը բոլոր կողմերից նույն շքեղությամբ կառուցելու համար մեծ միջոցներ կպահանջվեին, մասնավանդ, որ շինանյութը տեղի կարծր բազալտն է, դժվար մշակվող և երկար ժամանակ պահանջող։ Բացի այդ, տաճարի հարավային ճակատը նախում է բարձրացող սարալանչին, որտեղով ճանապարհ չի

² О. Խ. Խալպահչյան. Սահման. Մ., 1973, ս. 30.

առաջնում և սակավ դիտարկելի է, չյուսիսային ձակատի արևմտակողմի կեսը ծածկվում է մինչ այդ գոյություն ունեցող Աստվածածին Եկեղեցով, որ մի քանի մետրի զրա է ու երկու հակեղեցիների սիշն չարձարեցված է ակադեմիայի զամարածածկ սրահը, արևմտյան ճակատը ակտիվ սյունակամարաշարով ծածկելը անպայման կվնասեր նույն գծի վրա գտնվող Աստվածածնի հետ ստեղծվող-ներդաշնակությանը, առավել ևս, որ վերջինս զգալի փոքր է Ամենափրկչի համեմատությամբ:

Ի՞նչ է արել կառուցողը. սյունակամարաշար է ստեղծել միայն արևելյան ճակատի և հյուսիսային ճակատի երեացող մասի վրա՝ միշն Աստվածածին ու ակադեմիային հասնելը, և մի երկու կամարաթոփիք էլ հարավային ճակատի արևելյան ճայրում՝ արևելյան ճակատից օրգանական անցում կատարելու համար. Ընենքն ամբողջամբ արտաքում շարժած է սրբատաշ բազալտով, որն ինքնին ունենալություն է:

Սրևելյան խորանի երկու կողմերում ավանդատներ կան, որոնց պատուհանները բացվում են արևելյան ճակատի վրա Այդ պատուհանները բնականներ՝ ավանդատան և սրա արևելյակողմի կիսաբոլոր խորշի առանցքի նկատմամբ սիմետրիկ լինելու գեպքում կծածկվեին արևելյան կամարաշարի երկու նախավերջին զույգ կիսայուներով: Որպեսզի ալդ Ախին, կառուցողը ավանդատների այդ պատուհանները պատի հաստության սահմաններում թեքել է հյուսիսայինը դեպի հարավ, արքավայինը դեպի հյուսիս: Այս միջոցառումը հնարավոր է գարգրել, որ այդ պատուհանները արևելյան ճակատի վրա բացվեն երկրորդ և ութերրորդ (նախավերջին) կամարաթոփներում, ամենայն կառունակությամբ: Այս փոքրիկ նկատումը ցույց է տալիս, որ գեռնս հատկագիծ մշակելիս մտահոգված են եղել արևելյան ճակատի սյունակամարաշարի կանոնավորությունը շխախտելու հարցով:

Մեզ հայսնի չէ, թե Հ. Խալքախչյանը տեխնիկապես ինչ ձևով էր պատկերացնում գոյություն ունեցող ճակատի վրա, կառուցվելուց մոտ 20 տարի անց դեկորատիվ սյունակամարաշար ստեղծել-հարմարեցնելը: Նա փաստարկում է, որ շինության արևմտյան կեսի ճակատների, ինչպես և արևելյան ճակատի կամարաշարից վերև պատի շարքը ավելի կանոնավոր է, քան կամարաշարի սյուների միշն առկա պատի շարքը, որ իբր տարբեր մեծությամբ քարեր օգտագործելու պատճառով վերջինիս շարքերը հորիզոնականի շրերված: Նա երկի մտածել է, որ արևելյան ճակատի ստորին մասի երեսապատումը մոտ 15—25 սմ հաստությամբ և ճակատի ողջ լայնությամբ հեռացրել են (այսինքն՝ քանդել), տեղագրել սյունակամարաշարը, նոր ապա երեսապատում ստեղծել սյուների միշն: Այս ձևը թերևս ընդունելի չպիտի համարել, քանի որ մոտ 10—15 մետր բարձրության, բազալտակերտ, շաղախով ամրացած պատի ստորին կեսը՝ մոտ 7,5 մետր բարձրությամբ, պատի հաստության 25—30 տոկոսը քանդել, կնշանակի ողջ պատը խարիսկել, կայունությունը հարցականի տակ զնել, նաև այդ գործն իրականացնողների կյանքը վտանգի ենթարկել, Հնարավոր է մտածել ճակատի մի կողմից հատված առ հատված քանդել-վերակառուցել, շարժվելով դեպի ճակատի մյուս կողմը, քայլ կյանքում նման բան չի կիրառվում. Հանուն կանոնավորության ճակատը կառուցում են ընդհանուր լարով:

Այս պայմաններում ավելի դյուրին կլիներ գոյություն ունեցող ճակատին կիպ կպած նոր պատ կանգնեցնել սյունակամարաշարով հանդերձ, բայց հատկագծում նման բան ենթադրելու նշաններ չկան. այդպես անելու գեպքում փորձառու հեղինակը նկատած և իր գժագրերում անդրադրած կլիներ ու այդ մասին կգրել:

Ճակատների մեծաշափ և բարձրորակ լուսանկարների ուշադիր գիտում՝ մեզ հնարավորություն է տալիս չհամաձայնել հեղինակի նկարագրության հետ: Կամարաշարի միջայունային պատերի շարվածքը որևէ շափով չի գիշում մյուս ճակատների շարվածքի կանոնավորությանը: Ընդհակառակը, նկատվում

է կառուցող ճարտարապետի կողմից շարվածքը տեղին համապատասխան իրականացնելը։ Այստեղ ևս շարքերի կարերը ճորիկոնական են, ուղղաձիգ կարերը նույնպես կանոնավոր։ Եարքերի տարրեր բարձրությունները պատահական կամ ստիպողական չեն։ Երաճաշակ ճարտարապետը շարքերը ստեղծել է կապելով կամարաշարի խոլակների, խարիսխների, պատուհանների զարդարուն վերնակամարի թիերի հիտ և ալին։ Սյունակամարաշարի տարբերը գոյություն ունեցող պատի արտաքին հարթության վրա հարժադեցնելու ամրացնելու գործողությունների հետքեր չկան, իրենապատման քարերի վնասվածքներ և կարկատաններ չկան, երեսութիւններ, որ միշտ ուղեկցում են նման վերակառուցումներին։ Հաղիվ նկատվող փոքր մակերեսներ կան, որ ինչ-որ շափով անկանոն են։ պարզ հասկացվում է, որ այդպիսիք բնթացիկ նորոգման արգասիք են։

Այն, որ կիսասյուները զգալի շափով են առաջանում պատի հարթությունից, բնական է, մանավանդ քարի ու սպածառ գույն ունենալը, լուս ու սովորը դրա անհաժեղությունն ունեցել են Այն, որ սյունների խարիսխները ոչ թե նստել են որմնախարիսխի երրորդ, այլ երկրորդ աստիճանին, աւու ևս պատահում է մեր նաև այլ լավագույն հուշարձաններում։ այդ երրեմն արմում է որմնախարիսխի հիմքը շատ շահնացնելու համար։ Այսպիսի զեպքերում սյունաշարը մոտ 0,5 մ բարձրություն է շահում, մի քան, որ նույնական կարելոր է։

Մենագրության հեղինակը Ամենափրկիչ եկեղեցու ողջ շենքի և նրա արեմելակողմի ճակատի սյունակամարաշարի ու միաւամանակյա կառուցումը հավաստելու համար նշում է նաև, որ կտիտորների քանդակում առկա տաճարի մանրակերտի վրա սյունակամարաշարը ցույց չի տրված։ Պետք է նկատել, սակայն, որ հեշտալ խմբաքանդակում կարենոր թագավորին յավ ներկաւարդներն եք, որը և արել է քանդակագործը, իսկ եկեղեցու մանրակերտը սիմվոլիկ է։ Ինչպես բուռու մանուկի ռոտեռը (մի քանիսի բացառությունը), այնպիս որ այս պահանջը տվիալ ղեպօւմ, թերեւս, նկատի շառնվի, մտնավանդ որ այս մանրակերտը Սմենափոկի եկեղեցու հիտ պատկերի առումով բնդանուր ունի, չունի, ուր մնաց մանուամասերի պահանջ ներկայացնելը, և այս, հնարավոր է հնթաղրել, որ այգտեղ պատկերված է արեմտակողմի ճակատը, որտեղ ուղղանկյուն փորվածքը հնթաղրում և գիտավոր մուտքը։ Թանդակողը մանրակերտը ստեղծել է ոչ գրավիչ, որպեսզի կտիտորների գրավչությունը առավել ցայտուն լինի։

Եթե հետազոտողը մանրակերտի գմբեթաթմբուկի վրա սյունակամարաշարի ոչ մի նշան չտեսնելով, վերակազմության գծագրում ցույց է տվել զույգ կիսասյուներով կամարաշար, ապա նույնպիսի մոտեցում կարելի էր ակնկալել արենելան ճակատի սյունակամարաշարի համար։

Գիտնականն եկեղեցու կառուցման ավարտը, ինչպես ասացինք, համարում է 966 թ., հետեւաբար նրա կառուցումը կարող էր սկսված լինել տասը տարի առաջ՝ 956 թ.։ Այս նշանակում է, որ Ամենափրկչի ճարտարապետը արդեն 955—956 թթ. ստեղծած է եղել այդ մոտիվը և իրականացրել է բուն եկեղեցու կառուցման հետ միաժամանակ, այլ ոչ 980-ական թթ.։ Կարծում ենք, որ որեէ առիթ չունենք այդ մոտիվի իրականացման ժամանակը մոտ 20 տարով ուշ ներկայացնելու։

Հետաքրքիր է Հ. Խալիկախչյանի ներբուհիշյալ նկարագրությունը, որով կարելի է եզրակացնել ճիշտ հակառակը, որ իրոք սյունակամարաշարը կառուցվել է բուն շինության կառուցման հետ միաժամանակ և ոչ հետու Ահա այն, ողիսասյունների որմնախարիսխները և խոյակները զգալի շափով ուժեղացնում են կամարաշարի ղեղարվեստական արտահայտչականությունը։ Իրենց ձևերով և քանդակներու դրանք համաձայնեցված են պատուհանների և դրուերի շրջանակների հետ։ ինչով ձեռք է բերվում միասնությունը շինության ար-

տաքին դեկորատիվ զարդարանքում։ Այդ հիմք է տալիս ենթադրելու, որ կամարաշարն իրականացվել է իր իսկ՝ եկեղեցու կառուցողի կողմից։

Հաւաքախչյանը գրում է. «Արևմտահվրոպական գիտնականների կարծիքով Ամենափրկիլ եկեղեցու կամարաշարը ունի ճարտարապետական-գեղարվեստական մեծ, Հայաստանի սահմաններից շատ հեռու դուրս եկող նշանակություն։ Մասնավորապես Գ. Ռիվոյրան⁴ նշում է, որ այն (կամարաշարը—Տ. Մ.) հանդիսանում է Ռավեննայի ճարտարապետության հախորինակներից մեկը»⁵։

Դարի կեսերին Հայաստանում ստեղծված սյունակամարաշարի վերոհիշյալ նշանակությունը պարտավորեցնում է ճշտել նրա նաև ստեղծման ժամանակահատվածը, որը և կատարեցինք այստեղ։

³ Եռվի տեղում, էջ 31.

⁴ G. P. Rivoira. Architettura musulmana, sue originie suo sviluppo. Milano, 1914, p. 225 (տե՛ս Օ. Խ. Խալպահչյան. Ակադ. սույն, 1914, համար 225)։

⁵ Օ. Խ. Խալպահչյան. Ակադ. սույն, 1914, համար 225)։